

ւասիս վրայ ընդարձակ տեղեկութիւններ հրատարակելով, Զաւալիք վերնազրով զրբի մէջ, որ տպուած է ի Տփիսի, 1897ին, Այդ գրուածիք մէջ կը խօսուի երկրի բնակչաց, անտեսական զրութեան, ժողովրդի լուսաւարութեան, Հայ գիւղացւոց բնակարաններու, զգեստոց, զարդուց, ընտանեկան բարուց, և այլ կարնոր և շահեկան նիւթոց վրայ, Ախիալբաւարի զաւառը ունի բազմաթիւ ունիտատեղիներ, զրեթէ ամէն մի զեղեցիկ լեռան զագաթը, ամէն մի ջրառատ և սիզաւէտ քաջու, սիստատեղի է գարունը, ամսոր և աշճնը, զանազան որոշեալ օրեր ուստի կ'երթայ բարեպաշտ ժողովրդը.

Մշակ, 1882, թ. 188, 220: Փոքք, Գ. Ճր. 109—118: Կոումէկ, 1862. 220—224, Ռանայեցի, 175: Սամուկլ, 412: Վարդան, 101: Ն. Հայ. 127:

Եարայարելի Հ. ՍՈՒԹԻԱԽ ԷԳՐԻԿԻԱՆ



ՊՐՈՊԱՏԻԿ

—————

(Եար. տես յէջ 568, 1898)

ԱՌԱՋԻՆ յօդուածով խօսեցանց եկեղեցական հին մատենազբաց՝ Յովհաննու Ե. զիսյոն 3—4 համարներուն նկատմամբ ունեցած կարծեաց վրայ, Հիմայ հարիսնցի ակնարկ մը տան նոյն տուներուն յայլ և այլ լեզուա թարգմանութեանց:

Ա. Լատին թարգմանութիւն. — Յամ համու աւետարանին մեր ոսումնամիրած համարներուն կրկին լատին թարգմանութիւնը կան. այսինքն Հին և Նոր Վուլգաթա, որոց մէջ խնդրոյ նիւթ եղած տուները կը գտնուին, թէպէտ ոչինչ տարբերութեամբ մը:

Եւր ուռանձին հատորներով հրատարակած Զաւալիք, Վարանդ և Զամազեազուրի գաւառ վերնազրով աեղագական գդալաշատ դըռուածքները,

Բ. Ասորի Խարգմանութիւն. — Ասորից երեց և կամ չորս թարգմանութիւն ունին. Փէշիրո, Գիշրըրնեան ձեռագիրը, Երուսաղեանի կոչուած թարգմանութիւնը, և Փէշիր անեեանը: Այս շրմին մէջ, միայն Փէշիրո կամ Պարզ թարգմանութիւն ըստածն է, որ առհասարակ ընդունուած է Անորիներէն, որ և կը պարունակի նոյն համարները՝ առանց փորդ ինչ զանազանութեան: Ակելորդ չնը համարիր ըսել, մէ ոչ մի թարգմանութիւն, նոյն իսկ լատինականն և յոյն բնագիրն, այնչափ բազմաթիւ հին օրինակներ ունին, որչափ այս թարգմանութիւնը: Իսկ Գիշրըրթունեանը, որ այժմ իրեն առանձին թարգմանութիւնը մը չի նկատուիր, այլ Փէշիթոյի վրայ եղած ձուում մը, չոնի Յովհաննու Ե. զիսյոն երրորդ տան վերջը և ամբողջ չորրորդը: Կը ման երկու վերջինը, որոնք ամբողջ պահած են նոյն տուները. որով եթէ Ասորի Եկեղեցին՝ իսր ամբողջութեան մէջ նկատենց, մանաւանդ զիտելով Փէշիթո թարգմանութեան մեծ ազդեցութիւնը, բնաւ տարակուսելու տեղի չի մնար թէ Ասորի Եկեղեցին ճանցեր է ի հնուց հականառութեան առիթ տուող տուները:

Գ. Ղիտիլ թարգմանութիւն. — Երեց թարգմանութիւններէն որ առ Ղիտիսի եղած կը տեսնուին, երկուըը միայն ունինք, յորոց բաւական պատառիկներ մնացած են. որոց մէջ Յովհաննու Ե. զիսյոնը կը գտնենք: Բայց երրորդ տան վերջը և ամբողջ չորրորդը կը պակին թէրական (Sahidi que կամ Թéhéaine) անուանեալ թարգմանութեան մէջ. իսկ Մէմֆիսական թարգմանութեան մէջ նոյն տուներուն թարգմանութիւնը կայ, որ գլթ քանի մը ձեռագրաց մէջ կը գտնուի: Հետաւարք այդ համարները Ղիտի Եկեղեցւոյ բոլորովին անծանօթ մնացած չեն, վասն զի Ղիտիը երկար ժամանակ գործածած են, և արդ ևս կը գործածեն Մէմֆիսական թարգմանութիւնը:

Դ. Արաբական թարգմանութիւն. — Արաբական թարգմանութիւնը՝ համեմատութեամբ նոր են, և մեծամասնութիւնը ուժերորդ զարու մէջ եղած: Ցասուերկու ձեռագրաց մէջ, որք Փարիզու ազգային գրասուն

Նը կը պահուին , միայն մէկը շունի նոյն համարները : Եւ այս ձեռագիրներէն եօթը հատը՝ Ղվափի ծագումն ունին , մէկը՝ հաւա-նորէն Մարզնիդ է , ուրիշ մը ի Փարիզ ո-րինակուած , միւսներուն ծագումը անծանօթ է մեզ . Յաւելոնց գարձեալ ըսել՝ որ այս արաբերէն ձեռագիրը Ցոլիշաննու ե . զինոյն 1-4 տուներուն՝ եօթը զանազան թարգմա-նութիւններ . կը ներկայացընեն , որ Քիչ շատ իրարու կը նմանին , որովհետք մի և նոյն իրը կ'սանն , սակայն տարրեր բահերով :

Ե . Հայլական թարգմանութիւն . —
Հայլական թարգմանութիւնը մեծ կարեորու-
թիւն ունի զիխաւորապէս ստոյգ և հաստա-
տուն թօնական մ'ունենալուն համար : Ալդ, կը զտնինք հոն՝ երրորդ և չորրորդ տունե-
րուն ամբողջ թարգմանութիւնը, սակայն այս
տարբերութեամբ որ երրորդ տան վերջին
մասը ամէն ձեռագրաց մէջ կը զտնուի,
մինչզեռ չորրորդը շատերուն մէջ կը պակսի :
Թարգեալ նոյն չորրորդ տան վերջին մասին
մէջ զանազանութիւնն մը կայ՝ որ նշանա-
կութիւն ունի . այսինքն թէ, «Բժշկէր՝ ոչ ու-
նելով եշան հիշանդուրեան» ասածը, ըստ
բնագրին այսպէս է . կը բժշկուէր, ինչ ալ
որ ըլլար հիշանդուրեան » . նցիւն էցնետօ,
ֆ ճիշուու հաւեւչեցուածւ : Այս ընթեր-
ցուածը աւելի հետաքրքրական է անով որ,
ցարդ յոյն բնագրին մէջ զտնուած չէ այն-
պիսի իմաստ մը՝ որ հայ թարգմանութեան
պատճառ տուած ըլլայ : Զարմանալի է զար-
եալ որ, նման բան մը ամենին չի գտնուիր
հին թարգմանութեանց մէջ . Ասորի, Վրա-
ցի, Ալաւ, Սրաբ * և այլ թարգմանութիւնց
համաձայն են ամէնցն ալ բնագրին : Եւ այս
տարբերութիւնն չէ այն սխալներու կարգէն
որոց պատճառաւ, ինչպէս որ Մովսէս Խո-
րենացի կ'ըսէ, ստիպուցան Հայք՝ այն ինչ
աւարտած թարգմանութիւնն մը կրիին ուղ-
ղագրել է թարգմանել . այլ թէ, ինչպէս յայտ-
նի է, Հայկական թարգմանութիւնը կը պա-

բունակիք նախ սոյն տունը, և յետոյ հա-
նուեցաւ կամ փոխուեցաւ, թերեւ իրեւու-
րականներէն։ Վասն զի ամենաստոյդ Է թէ
հայկական թարգմանութիւնը յետ աւարտե-
լուն՝ կրկին անգամ ճշգուեցաւ Աղեսան-
դրեան ձեռազբաց վրայէն, զորս Եփսոսի
ժողովոյ կանոնաց հետ բերին թարգմանիչը.
բայց արդեօր ննջն տաեն (438-442) թէ
քիչ մը վերջ՝ չորրորդ տունը աներեւութեա-
ցաւ հայկական թարգմանութիւն մէջն՝,
կարելի չէ վճառել. սակայն հաւանուքն՝ Հայց
այս չորրորդ տան նախկին թարգմանութիւն
մը ունեցած են, որ և յետոյ դիտմամբ խան-
գարուած է Երևուորականաց կողմնակիցնե-
րէն, թէպէտ այս խանգարման ժամանակը
որոշել զիւրին չէ; Կ'ըսմնց, թէ Երևուորա-
կանց խանգարեցին զայն, վասն զի եթէ
Հայց, Առոտուածաշունչի թարգմանութիւն մէջ
3 և 4 տուները նախնապէտ ունեցած շլ-
լային, այդ տուները վերջինք ընդունած պի-
տի ըլլային, Խաչակրաց ժամանակէն ետքը,
հետեւարար, հաւանական է թէ շատ մը թարգ-
մանութիւններ պիտի գտնայինք Հայց մէջ,
ինչպէս որ Ղափիներուն հանդիպած է Պու-
կառու իթ. 43-44 տան համար, և ամէն
մատենագիր ըստ իւր քմաց պիտի թարգ-
մանէր, յոյն, ասորի և կամ արար բնազրի
մը վրայէն. Մինչդեռ ասոր հակառակ մի-
միայն թարգմանութիւն կայ:

Դարձեալ, եթէ Հայր այց համարները իրենց հին վերծանութեան մէջ շռնենային, անկարիլի էր որ միջին զարու մատենազիրը ձաննային զայնս ու մեկնէին 'առանց գէթ յիշելու' թէ իրենց զրչազրաց մէջ կը պահ-սէին: Եւ մենց սույոյ ապացոյց ունինք թէ 3 և 4 տասները Խաչակիրներէն առաջ ալ ի Հայաստան ծանօթ էին. որովհետ նանա՝ Զաբարիա կաթողիկոսի օրով ծաղկող մա-տենազիր մը (854-876), այսպէս կ'ըսէ Յովհաննու Աւետարանի մեկնութեան մէջ, զոր ի խնդրոյ Բագարատ Բագրատունուայ յօ-

* Հարկ է բացառութիւն մընել Պարսիկ թարգմանութեան համար, որուն ահաւասիկ իմաստը. Ա Հրեշտակ մը կ'ինչեր այս աւաղա-

Նին մէջ և կը յուղեքը ջաւաբը - ով որ նոյն պահանջան իջներ և մէջը նեսուուրեն կը բժշկուիք, իսկ յետոյ իջնուն (չեր բժիկուեր) »»

ըինած էր . «Եւ վասն էր արգեօք չուրբն յուղեին . ցանդի ըստ հրամանին Աստուծոյ՝ հրեշտակ տեան իջանէր և յուղէր զլուրսն՝ առ ի բժշկութիւն մարմական ախտից, որ գուշակէր զմաքրութիւն հոգուցն որ ի ձեռն աւազանին . . .» : Նաև ծագմամբ ասորի էր, բայց հայերէն և արաբերէն կը հասկրնար, և իր զրածը ինքն իսկ կը ֆարգմանէր այս երկու լիզուներու . իրեն բնազիրը կորսուած է, սակայն հայկական թարգմանւթիւնը՝ հասած է մեզ, ի Տիգրանակերտ օրինակուած ձեռագրի մը մէջ 1155ին, որ և այժմ ի Ս. Ղազար Վենետիկոյ կը զոնուի :

Իսկ ԺԲ. զարու մէջ ուրիշ հեղինակ մը՝ Սարգիս Կունտ անուամբ, նոյն Յ-4 տուները կ'թնդունի, Յովիշաննու Աւետարանին վրայ ըրած մեկնութեան մէջ, « Յորս անկիալ զնէր բազմութիւն յոյժ հիւանդաց կաղաց որը ակն ունէին ջուղբոյ, Հսոս հրամանին Աստուծոյ իջանէր հրեշտակն և յուղէր զլուրսն, և մարմական ախտից բժշկութիւն լինէր . . . Զի թէ հաւատան նոցա թէ Սեղովմայ ջուրն ի հրեշտակէն բժշկէր զմարմայ զհիւանդութիւնս, հրչափ և հրեշտակաց տէրն սպիտակացուցանէ մկրտութեամբ զհողի և զմարմինս : Ուրեմն յայտնի է թէ Հայր, Միջին գարու մէջ ճանչցած էին արդէն Յովհաննու՝ իննորյ նիթ եղող համարները, և զիւրին է զայս պարզել՝ եթէ ընդունինք թէ այդ համարները, ինչպէս նաև Ղուկասու իթ 43-44, յապահցան եօթներորդ զարուն կիսուն, Մանազկերտի կամ Դրձայ ժողովոյն՝ 650թ, Յովիշան Մայրագումեցոյ և իւր

կոտմանցաց ձեւըով՝ Եւ որովհէետե բանի մը ձեռագրաց մէջ մնացին նոյն տուներն, Հայք կարող եղան անոնց ծանօթանալ, և այսպէս ազգին մէջ զարձեալ ընդունելութիւն զտան . Այս մասին աելի տեղեկութիւն պիտի ու նենայինք՝ եթէ Զաքարիա Ա. Կաթողիկոսի (854-878) չորս աւետարանաց մեկնութիւնը ձեռցերնին հասած ըլլար, ինչպէս նաև եթէ Նանայի՝ սրբոյն Յովիշանու, և Սարգիս կունտի՝ Ղուկասու և Յովիշանու աւետարանաց մեկնութիւնը հրատարակուած ըլլային * :

* *

Խօսեցանց առանձնական մտաենազրաց վրայ . Խօսեցանց նաև թարգմանութեանց վրայ, անցնինց հիմայ եկեղեցական պաշտամանց զրեցրուն և զանազան սովորութեանց, որոնք աւելի մեծ ապացոյց մը պիտի ընձեռնեն Յովիշանու Ե. Պիոյն Յ-4 տուներուն վաւերականութեան կամ ոչ վաւերականութեան :

Ցիյուք. — Զատկէն վերջ շորբորդ կիւրակէն՝ Յունաց եկեղեցական լիզուով կոչուած է Անդամալուծի կիւրակէ Կարառի տօն ուռարձնուո՞ւ և աւելորդ է յիշեցնել թէ նոյն օրը Յովիշանու մեզ ծանօթ զլուիր և տուները պաշտաման մասն կը կազմէին, և ձեռագրից փոքր իւրից կը զանազանին յայսմ միայն՝ որ օմանց շորբորդ կիւրակէ կը գնեն, այլը սակաւց՝ երրորդ։ Սակայն այսպահս ոչինչ պիտի յայտնէր թէ յիւրակի արգեօք

« Ենդ բազմամեայ լուծեալ անձին Գրբաստիկէ աւաղոնին, Յորուում և եւ զ-ք ոչ ունիմ Զի զիս արկցէ մինչ յուղեցին » : (Աղեքրդ. էջ 78. Տպ. 1830):

« Պարատակէ աւաղոնին, Արքուերեսոււմ ամ հիւանդին, Ասաց բառուալ զիւրեաւ մահցին, Երշիչ նովաւ յօր շաքարին » : (Բան հաւատայ, էջ 186. Տպ. 1830):

3—4 համարները ծանօթ լին, եթէ սոյն կիրակի օրուան ժամերգովթեան մէջ՝ տեստարանի պատմովթենէ բաղուած փոքրիկ սունաւորներ ալ չզանուէին:

Լատինք. — Լատինք, մեծ պահոց երկրորդ ուրբաթը, յետ կարդալու Եկեղեկի ԺԸ. 4—24 ընթերցուածը, կը յաւելուն Յովհաննու աւետարաննի սոյն անցըը 4—15, և այս սովորովթը հնուց ի վեր է: Խակ վերջերը մտաւ, նոյն աւետարանին Ե. զիխոյն 4—4 տուները նաև սեփականել Ռաֆայէլի հրեշտակապետի տօնին, հոկտեմբեր 24ին: — Դարձեալ ամբոսսեան արարողովթեան մէջ 4—15 համարները Նոր—կիրակէի յաջորդ երեշշարթի օրը կը կարդացուին ի պատարագի, և հաւանական է որ խնդիր վերցնող համարներն ես, որուն զրազիր օրինակը տարակուանաց տեղի չեն տար, Միլանու արքեպիսկոպոսի ժամանակէն ի վերնոյն օրը կը կարդացուին: վասն զի ինչպէս կը տեսնուի նոյն վարդապետին De Sacramentis, թաղագու խորհրդոց ճառին, հայրապետը առ նոր մկրտեալ կ'ուզզէ իր խօսքը. Հետեւաբար զատիկի տօնախմբովթենին ցեշ օր վերջ:

Ղփտիք. — Ղփտի Եկեղեցւոյ պաշտամնէն՝ բաղզատմամբ միւս արևելեան Եկեղեցեաց, մեզ նուազ ծանօթ են, սակայն ինչ որ ի ձեռագրաց և Raphæl Tuki (Euchologue) ու Paul de Lagardeի (Orientalia) Հրատարակութիւններէն կը տեղեկանամբ, այս է, որ տարուին մէջ կրին անգամ և մկրտովթեան աւագանի վրայ կը կարդացուին 4—16 կամ 4—18 համարները, և ամենուն մէջ ալ երրորդ տան փերջը և չորրորդը կը պակսին ամբողջ:

Ասորիք. — Ասորի Եկեղեցւոյ մէջ չորս

զանազան ծէսեր կան, Մելքիդ, Յակոբիկ, Նեստորական, Մարոնիտ, յետինս բաղդատամամբ նոր է բան միւս երեքը, որով կարելի չէ ի վկայովթին կոչել:

Մելքիոր՝ ի Յունաց միայն լեզուով կը տարբերին, որովհետեւ իրենց ամէն Եկեղեցական մատեսնց թարգմանութիւնց են յունարենէ. արդ ինչ որ Յունաց համար ըստիք, նոյն է ասոնց համար ալ, զայս միայն ըստի կարեսոր կը համարենք՝ որ երեց լեզուով Աւետարաններ կը գտնուին իրենց բովի, Դամասկոսի քարքառ, գրական Կոստորեն, Վրաբերէն:

Անցնելով Յակոբիկ արարողովթեան, կը տեսնենք որ յաճախ ի գործածութիւնն է նոյն զրութիւն, սկսելով մկրտութիւնն աւեզանէն, որուն վրայ կը կարդացուի Աւագ երկուշարթի և երեշշարթի օրերը. կը հանդիպինց կարգաւ մեծ պահոց երրորդ ու հինգերորդ կիրակէից. Հոգեգալյստեան երկուշարթին, և այլն. այս ամէն ընթերցուածը հանուած են Փիլիպսեն—Հերալիկեան և կամ Փէշիթն թարգմանութիւններէն որոնց կը պարունակեն այց համարները:

Խակ նեստորականը՝ յայսմ միայն կը զանազանի իրեն մերձաւոր Միփարնակ Եկեղեցին, որ իւր ծագումէն մինչեւ ցայժմ մի միայն արարողութիւն ունեցած է, և իւր Եկեղեցական մատենից մէջ մեծ համաձայնութիւն կայ. արդ, Յուհաննոս Ե. 4—18 տաւները մեծ պահոց Դ. շարթուն երկուշարթի օրուան սեփականուած են:

Թէպէս Ասորի Եկեղեցին միաձայն կը խոստովանի՝ խնդրոյ նիւթ տուող տուներուն վաւերականութիւնը, սակայն նա միայն կը յիշէ, Բար-Երբուսի * բիթովի, այդ տանց վէճի առարկայ ըլլալն:

* Բար-Երբէսու, Անձնաւորութիւնն և մատենագիրն անւամբ յօդուուծ մը կը կարդանք ի թէրթին Al-Machrig (Beirut) թիւ 9. L. Cheikho սուուրագութեամբ. յորում՝ չահեկան քաղաքաւած մը կ'ընչ ծՓ քառա ասորի մեծ պատմէին վրայ մտելու եղած ուսումնալութեանց: Ապուլֆարամ, անուանեալն Բար-Երբէսու՝ Երայէցի ըլլալուն համար, ապրէցաւ 1226—86, եպիս-

կոպուսապետ էր Յակոբէկեանց. արևելեան պատմութիւն մը զրեց ասորերէն լեզուով (յետոյ ալ արարերէն), յաւելուածներով), որով ընդարակա աղբերէ մը դարձած է ասորի և արք պատմական զրականութեան համար: Ասոր լատիներէն թարգմանութիւն մը հրատարակած է արևելագէտն Rococke (Historia compendiosa dynastiarum; Oxford 1665).

Բար-Երրէսս ուսկի՞ց արգեօց առած էր այդ իւր «կ'ըսեն»ը : Ինընին մեզ չի յայտներ . սակայն մատածելով որ իւր Աօւտ: Ր-Ռոսէի մէջ կը յիշատակէ Հայերէնը, և նոյն իսկ երեմն Ղփանքէնը, դարձեալ, զիտելով որ նա ծնած է բաղացի մը մէջ որ թէ՛ հայ թէ՛ ասորէ է, վերջապէ՛ նկատելով որ իւր «կ'ըսեն»ը միայն չորրորդ տան և ոչ երրորդին կիսոն համար է, գծուար չէ հետեցընելը՝ թէ Բար-Երրէսս այս ամթխ մէջ արձականից մ'է սոսկ Հայաստանի մէջ բուռակին :

Հայկական Եկեղեցին մասնաւոր սովորովին մ'ունի, որ բաց ի Եկեղեցական տարւոյ ընթացից մէջ կարգացած Աւետարաններէն, նոր կիրակէի յաջորդ վեց շարաթներուն մէջ կ'ընթեռնու չորս Աւետարանները . սոյն ժամանակ չարշարանաց պատմովինը չի կարգացուիր՝ արդէն սուրբ Շաբթուան մէջ կարգացուած ըլլալով, դարձեալ՝ Յիսուանց մէջ անոնց շատ շաբթարելուն համար : Յօվհաննու Աւետարանը պատարազի սեփականուած է, ինչպէս որ Յունաց սովորութիւնն ալ է . Պուկաս՝ առաւոտեան պաշտաման, Մատթէոս և Մարգրետ Եկեղեցեան * : Այս սովորութիւնը այնպէս մտած է Հայոց մէջ, որ ձեռագրաց և նոյն իսկ տպագրութիւնոց եղերը նշանակուած է իրեն յայտնի նշաններով ** :

Հետևաբար, ինչպէս կը տեսնուի, մեծ խաիր կայ ի մէջ Հայոց և այլ ազգաց պաշտաման բաժանմանց : Հայերը Յիսուանց մէջ Աւետարանը մէկ ճայրէն միւսը կ'ընթեռնուն, և այն սովորական կարգաւ, իսկ տարւոյն միւս ժամանակները՝ կը նմանին այլ Եկե-

* Այս կարգին պատճառն, ինչպէս որ մեզ հաւանական կը տեսնուի, Եկեղեցական օրը նախընթաց իրիկունքն սկսիլն է, զնոյն կը հաստատեն նաև մեծամեծ տօներու նախատօնակի արարութիւնք . և յայտնի է թէ այլ առնուած է ի Հրէկից : որք առաւելաց Երեալէն կը սկսիլն օրը, որուն կը վկայէ Աւետարանն ըսկէլով . «Եւ օրն եր ուրբար և շարար շուտանայր», ի պատմութեան Յիսուսի թաղման :

** Ետ կարենը է գիտնալ թէ Հայք արդեօք

զեցեաց, միայն թէ բնաւ խան չունին, Ցաւիանու Համարարքափին ոնով, ինչպէս որ Յունաց և Ասորուց մէջ կը տեսնենք :

Արդ, այս տեղեկութիւնը գարձենելով Յովհաննու Ե. զինոյն, կը տեսնեմք թէ 1-18 տուները կը կարգացուին յետ Զատակի, երրորդ եօթներկին եօթներորդ օրը, պատարագի միջոց : Սակայն 3-4 տուները մաս կը կազմեն այլ ընթերցման թէ ոչ . կը պատասխանեմք, թէ առհասարակ մեր քննած ձեռագրաց մէջ, չորրորդ համարը կը պակսի, և ընդհակառակն ամէնքն ալ երրորդ համարին վերջը կը պարունակեն . որով զրիթէ սոսոյդ է թէ չորրորդ տունը երկար ատենէ ի վեր կը պակսի Հայոց ճաշցցին մէջ, իթէ միշտ պակսած չէ :

Գարձեալ ի Մաշտոցի, բժշկութեան Աւետարանաց մէջ, զորս հիւանդաց վրայ սովոր են ընթեռնուկ, կը հանդիպիմք Ե. զինոյն, որուն 1-4 տուները կը կարգացուին ի մասնաւորի անդամալուծաց վրայ . Աւելորդ է ըսկել թէ ի սպազրութեան (Վենեսաիկ, 1840, Էջ 143-144) 3-4 տուները կը գտնուին . այլ արգեօց հին զրջագիրը կը հաստատեն զայն :

Մինչև ցարդ մեր յիշած վկայութիւնը՝ հայկական Եկեղեցին հակառակ կը ցուցընէին չորրորդ տան . սակայն հետեւեան պիտի պացցուցանէ թէ այդ տունը ծանօթ և ընդունուած ալ կը, և այս դէմ ընդէմ վկայութիւնը յօվուածին մէջ յայտնած է կարծիքը կը զօրացընէն . այն է, թէ Երևանթականը անկարող եղան ի սպառ անհետ ըսկել նոյն տունը *** : Արդ, այս վկայութիւնն է Սուբիասանց շարականը, որ Պե-

*** Այդ կարծիքով ոչ թէ հաստատել Կ'ուոզէ զիտնական բանասէրը, թէ միայն Հայոց մէջ տեղի ունեցած է սոյն յապաւումը, կամ ի Հայոց սկիզբն առած, այլ թէ ուրիշ պարագ մէջ եղածին արձականգն հասցընողներ եղան նաև ի Հայաստան . ինչպէս որ Պաթենաւորն

տրոս Գետադարձի ընծայուած է, ի սկզբն
մետասաներարդ գարուն, (1049—1058) թէ.
պէտք նշանաւոր հայկաբանը շատ աւելի հին
կը զիեն ոոյն երգը Ահա բառ առ բառ մէջ
կը բերենք Աւետիքեանի տպագրութեան և
շարականաց մեխութեան համեմատ. «Նոյն
և զինքն իսկ տեսանեմք Պրոպատիկէ աւա-
զանին. յորը զընին բաղմովինը ախտա-
մետաց, ակնունկով փերսունին ջուրցն յուզ-
ման. — Աստանոր նորոգեցաւ մեզ աւա-
զանըն սելովմայ, ի բանալ զալցս արրտից
առ ի մերժել զախս հոգւոց և մարմոց»:
(Վենետիկ, 1844, էջ 594): Առդ, ինչպէս
կը տեսնափի, հեղինակը յիշահակութիւն
կ'ընէ սուրբ մարտիրոսաց զերեզմանին վրայ
կատարուած հրաշից և կը բաղդատէ զիյոն
բեդէեղայի աւազանին հետ *

Մինչև ցարդ ըսածնիս ամփոփել ուղերով
և գարձնելով աշերնիս Ղփտի ի Հայ Եկեղեցից
վրայ, սոյն հետուովիճիւնս կ'ունե-
նանք. թէ, այս երկու Եկեղեցիք միայն են
որ տարակուասանաց տեղի կու տան այդ
համարներու մասին, մինչդեռ այլը՝ եթէ՛
մատենազրաց վկայութեամբը, եթէ թարդ-
մանութեամբը, և եթէ պաշտամամբ՝ կը
հաստատեն 3—4 տուները: — Կը մնայ մեզ
քանի մը խօսց ալ ձեռագրաց համար ըսել:

Շարայարելի

Կը յիշէ զՄայրագոմեցի, Ղուկասու իբ. 43—44
տուներու համար: (Տես Զամշեան. Պատմ. Հայոց.
Հա. Բ. էջ 362):

* Նոյն շարականի մեխութեան մէջ, կը յի-
շուէ Պրոբատիկէն՝ յաշինս ունլուայի, հե-
տեւալ կերպով, որ անծանօթ մնացած է ան-
շուշտ Աննե Մարտիք. «Թուեան զալս և զա-
նորէնութիւն հոգւոց մերոց՝ ի ձեռն Հրոյս այ-
սորիկ . . . որպէս զանազան ախտան ի ձեռն
յուշման նուրցն սելովմայ». (էջ 253):

ՄՈՒՐՃ — Կը խօսի ազգագրակամ,
հասարակակամ, քաղաքակամ, զրախօսակամ
միւրից վրաց: Խմբագիր Աւետիք Արախա-
եեաց: — Գիմն է տարեկամ ՅՈ ֆու.:
չասցէ TIRLIS, Rédaction de la revue MURCH.

ԵԴՍՈՆԴՈՅ ԴԷ ԱՄԻՉԶԻՍ

Ճ Ա Ռ Ե Ր

(Տար. տես էջ 258)

Ե.

ՄԱՆԶԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(1895)

ԲՈՒԻՑ, սիրելի տղաք, ձեր ներկայ
վիճակին մէջ, իրեն մողվուած ճանապար-
հորդներ էց չոգնեաւի մը խելքը, որ խարիսխ
վերցնելու վրայ է երկայն ճանապարհորդու-
թեան մը համար. հաւատք ունիք յաջող
ուղևորութեան մը մէջ, փոփոխուած մեծա-
մեծ տեսարաններով, և զուարթցացած նոր
և հաճոյական յուզումներով, և խաղաղ կեան-
ցի մը բոլոր հանգստութիւններով: Բայց
մոտածեցէց այսօրունէ, որ զուք միայն, հա-
ւասար և քարեկամ, պիտի շկարեց սկիհա-
նուը. որ հանդիպական զուխը գեղեցիկ
սրահին՝ որուն մէջ պիտի նստից շքեզ սե-
ղանի մը, լայն միջոցներէն անդին, ուր,
կարգալով և ուրախ բաներու վրայ խօսելով,
կը պարտիք ազատաբար, կայ աղքատ և
երեսէ ձգուած մարզիկներու ամբոխ մը, որ
շարժելու հազիւ քիչ մը տեղ ունի, ենթար-
կուած օվի անբարեխունութիւններու և ձա-
խորդութիւններու, և տիսուր յիշատակներով
լիցուն, և խորոշած շարագուշակ նախազա-
ծութիւններով, և եղած աւելի տրտում ձեր
զուարթ հանգստութեան երեսին. և թէ այս
մժմիսը բաղկացած է ձեր եղբայրներէն և
ձեր ցոյրերէն, որ ձեզի համար աշխատե-
ցան և պիտի աշխատին, և կապուած են
ձեզի հետ իտալացի արեանը և Քրիստոսի
կրօնէն կրկին կապերով:

Նախ և յառաջ, մորեինիդ այս մոտածու-
թինը զրէց, որ զուք բաղդաւոր ծնաց. վասն